ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«4» նոյեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-110/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի 21.10.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 21.10.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-10/16» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 10 մասնակիցներ, այդ թվում նաև «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը նշել է, որ գնման առարկան բաղկացած է եղել 65 չափաբաժիններից, որի ընդհանուր նախահաշվային գինը սահմանվել է 84512800 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.10.2016թ. տեղի ունեցած նիստով որոշել է «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար այն հիմնավորմամբ, որ հայտում ներառված հավելված 9-ում նշված չէր արժույթի կոդը, իսկ գործարքի նպատակը նշված է «պայմանագրի ապահովում»:

«ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն, որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ, նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների և գնումների գործընթացների տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը նույն օրենքի հիմնական նպատակն է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ըստ Ընկերության՝ հայտում ներառված տուժանքի մասին համաձայնագրում նշված է մասնակցության հայտի ապահովում, սակայն կից ներկայացված վճարման պահանջագրում գործարքի նպատակը «հայտի ապահովում» փոխարեն նշված է «պայմանագրի ապահովում», որն իրենից ներկայացնում է տեխնիկական վրիպակի արդյունք և չէր կարող խոչընդոտ հանդիսանալ Պատվիրատուի կողմից նշված գումարը՝ 1066392 ՀՀ դրամը, գանձելու ժամանակ, քանի որ, և հավելված 9-ով ներկայացված տուժանքի համաձայնագիրը, և վճարման պահանջագրում, և հայտի ապահովման գումարը, և լրացման ենթակա պարտադիր դաշտերը մասնակցի կողմից լրացված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է արժույթի կոդին, ապա Ընկերությունը հայտնել է, որ մասնակցի կողմից պարտադիր դաշտում նշվել է վճարվող գումարի արժույթը բառերով (ՀՀ դրամ): Ընկերությունը նշել է նաև, որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու դեպքում Պատվիրատուն կտնտեսի հետևյալը՝ ըստ չափաբաժինների՝

Չ/Բ 1 «Ակուստիկ հոսքափնտրիչ» 10 000 ՀՀ դրամ,

Չ/Բ 5 «Սարք» 1 000 000 ՀՀ դրամ,

Չ/Բ 6 «Վառարան» 241 800 ՀՀ դրամ,

Չ/Բ 7 «Սարք» 498 800 ՀՀ դրամ,

Չ/Բ 10 «Օսցիլոսկոպ» 550 000 ՀՀ դրամ,

Չ/Բ 32 «Կոլիբրատոր» 16 330 ՀՀ դրամ,

Չ/Բ 62 «Սարք էքսպլոզիմետր» 2 255 100 ՀՀ դրամ,

Չ/Բ 63 «Սարք ազդանշանիչ» 1 115 000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն խնդրել է.

1. դադարեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-10/16» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2016թ. թիվ 8 արձանագրությամբ կայացված «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,
2. կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել պայմանագիր կնքելու գործընթացը:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.10.2016թ. գրությամբ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ բողոքը անհիմն է, քանի որ մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 9-ին կից վճարման պահանջագրում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ սխալ է լրացված «Գործարքի

նպատակ» դաշտը (հայտի ապահովման փոխարեն գրված է պայմանագրի կատարման ապահովում) և նշված չէ արժույթի կոդը (AMD):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ մասի 4-րդ կետը (Հանձնաժողով մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը)՝ հայտերի բացման նիստի ժամանակ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

3. <u>ԳԲԽ-110/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-110/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-10/16» ծածկագրով բաց ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն:

2. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 13-րդ կետի համաձայն՝ արժույթը (բառերով և ***<u>կոդով</u>***) դաշտը պարտադիր լրացվում է վճարողի կողմից:

3. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 14-րդ կետի համաձայն՝ ***<u>գործարքի նպատակը դաշտը պարտադիր նախապես լրացվում է շահառուի կողմից:</u>***

4. Ընթացակարգի Հրավերի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի օրինակելի ձևը հետևյալն է.

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N ***(մասնակցության հայտի ապահովում)***	
2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝ **<<ՀԱԷԿ>> ՓԲԸ**	
9. Շահառուի ՀՎՀՀ՝ **04401874**	
10. Շահառուի բանկը՝ **<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ**	
11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **1930000199200100**	
12. Գումարը թվերով և բառերով՝	
13. Արժույթը (բառերով և կոդով)՝	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ **հայտի ապահովում**	
15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ **<<ՀԱԷԿ-ԲԲԱՊՁԲ-10/16>>**	
16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	17. կից՝--- էջ
19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.10.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ որոշել է մերժել «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը (Հավելված 9 (հայտի ապահովում) նշված չէ արժույթի կոդը, իսկ գործարքի (վճարման) նպատակը նշված է պայմանագրի ապահովում):

---

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

6. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-110/16 բողոքը քննող հանձնաժողովի, 25.10.2016թ. կայացրած որոշմամբ, Ընթացակարգի 1-ին, 5-7-րդ, 10-րդ, 32-րդ, 62-63-րդ չափաբաժինների մասով, բավարարել է «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. <u>ԳԲԽ-110/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի 21.10.2016թ. ներկայացրած բողոքը, «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-10/16» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 13-րդ կետի համաձայն՝ արժույթը (բառերով և ***<u>կոդով</u>***) դաշտը պարտադիր լրացվում է վճարողի կողմից:

«Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 14-րդ կետի համաձայն՝ ***<u>գործարքի նպատակը դաշտը պարտադիր նախապես լրացվում է շահառուի կողմից:</u>***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 05.10.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ որոշել է մերժել «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը (Հավելված 9 (հայտի ապահովում) նշված չէ արժույթի կոդը, իսկ գործարքի (վճարման) նպատակը նշված է պայմանագրի ապահովում):

Ուսումնասիրելով «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը՝ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը հրավերով սահմանված պայմաններին (դրա համար նախատեսված լրացման կարգին) չհամապատասխանելու հիմքով, (մասնավորապես՝ հայտում նշված չէ արժույթի կոդը, իսկ գործարքի (վճարման) նպատակը դաշտում նշված է պայմանագրի ապահովում) պահպանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված պահանջները, քանի որ «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը լրացրել է ***վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգով սահմանված դրույթների անհամապատասխան, մասնավորապես՝*** վճարման պահանջագրի արժույթը (բառերով և ***կոդով***) դաշտում նշել է ***միայն ՀՀ դրամ, իսկ կոդը չի նշել***, բացի այդ ***գործարքի նպատակը դաշտում Ընկերությունը նշել է պայմանագրի կատարման ապահովում, մինչդեռ պետք է նշեր հայտի ապահովում***:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի 21.10.2016թ. ներկայացրած բողոքը մերժել. անփոփոխ թողնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-10/16» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված «ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ. ԵՎ Ա. ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-110/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան